


բաւ նորա բնակիչներէց մի մասը որոնց մէջ գտնուում էր Զարարիա պատրիարքը և նորա հետ մէկ տեղ Քրիստոսի խաչափայտը մի տապանակի մէջ կնքած: Հերակլ կայսրը կրկին յաղթելով պարսից 628 թ. - ին, նոցա հետ կապած գաշինքի մէջ նաև այն պայմանը գրաւ, որ յետ գործնեն իրեն գերի տարած խաչափայտը: Բոլորովին անվնաս ստանալով այդ թանկագին սրբութիւնը՝ նա 631 թ. - ին անձամբ յաղթական կառքի մէջ ծընկաչոր բռնած՝ Երուսաղէմ՝ բերաւ և սեփական ուսերի վերայ մեծ հանգիսիւ Քողզութայի գլուխը բարձրացնելով՝ գրաւ «վերացրեց» կրկին ս. Յարութեան վերանորոգուած տաճարի մէջ՝ ի տես բոլոր քրիստոնեաների: Բնական է, որ այսպիսի մի հանդէս մեծ տպաւորութիւն գործէր հետու և մտքիկ հաւատացեալների վերայ և ցանկութիւն յառաջ բերէր պահելու նորա յիշատակը՝ ամեն տարի կրկնուուող տօնախմբութեամբ:

Պէտք է ենթադրել, որ Հերակլ կայսեր այսպէս յաղթանակաւ խաչը գերութիւնից ետ բերելը շատ մեծ ազդեցութիւն է թողել արևելեան քրիստոնեաների, ի թիւս որոց և հայերի վերայ և նոցա մէջ մեծ հաւատ յառաջ բերել գէպի ս. խաչի զօրութիւնը: Խաչապաշտ ժողովուրդները, գոնէ հոգեպէս միացած՝ կոխ էին մղել այստեղ անհաւատների դէմ և ս. խաչը նոցա կարողութիւն էր շնորհիւ փառաւոր յաղթութիւն տանելու, բոլոր քրիստոնեաներին հասած անարգանքը մէջ տեղից վերցնելու: Ի՞նչ զարմանք, որ նոքա այնուհետև կրկնապատիկ ջերմեանդութեամբ պէտք է վերաբերուէին գէպի այն ամենը, ինչ որ խաչի հետ կապ ունէր: Թօներ սահմանէին, տաճարներ շինէին, իսկական խաչափայտի մի մասը, կամ նորա թանկագին նիւթերից պատրաստած օրինակը ձեռք բերել աշխատէին: Այս նոյն տարում է նաև, որ հաստատուել է Պարսգայ ս. Խաչի ուխտը և Թօնի թաղի ճրգնաւորի տեղեան համաձայն և Ներսէս Ք. Նի նոց հայրապետի անօրէնութեամբ: Իսկ ի՞նչ ի նչպիսի երախտագիտութեամբ են վերաբերուել մեր հայրերը գէպի Հերակլի սխալործութիւնը, այդ երևում է նաև նորոմից, որ մեր պատմիչները միշտ պատկառանքով ու գովանանքով են խոսում նորա մասին: Ընդելով որ նոյն Հերակլն էր կզր կաթուղիկրտին ստիպել Յունաց եկեղեցու հետ միութիւն հաստատելու և իւր այդ շարքաւորի յանձնառութեամբ ուրազողի վաս անունը ժառանգելու պատմութեան մէջ: Առհասարակ

ինչքան մեր ունեցած ծանօթութիւնները ցոյց են տալիս՝ մեր եկեղեցու մէջ առանձնապէս յարգի է եղել խաչի անունն ու պաշտօնը, մինչդեռ գէպի սրբոց պատկերները մեր նախնիք միշտ զգուշութեամբ են վերաբերուել և մի ժամանակ մինչև իսկ չափազանցութեան հասած պատկերապաշտութիւնը յունական ստօրութիւն համարելով կրօնի են վարել նորա դէմ: Այսպէս օրինակ կիրակոս Քանձակեցու և արիշների վկայութեան համաձայն Վահան կաթուղիկոսը (998—970 թ.) նորա համար գահընկեց եղաւ և բանապրուեցաւ, որ եկեղեցիների մէջ իկոններ մտցնելով՝ քաղկեդոնականութիւն տարածել էր կամենում: Միայն Թանգրակիցի աղանդաւորներն են եղել, որ պատկերների հետ մէկտեղ մերժել և անարգել են նա և ս. խաչի պաշտամունքը: «Զարմանալի էլ չէ, որ բազմաշարժար անարգանքի ու հեծութեան խաչը գարեբի ընթացքում ամենայն հաւատարմութեամբ կրող հայ ժողովուրդը առանձին ջերմեանդութիւն տածէր գէպի այն նշանը, որի անունով կրում էր այդ ամենը և որի Տիրութից փրկութիւն էր սպասում:

Բարկէն.



Մ ԱԵԵՏԱՐԱՆԱԿԱՆ — ՀԱՄԱԵՆԱԿԱՆ
ՀԱՄԱԵՏՈՂԱԳԸ:

Երթուրտում 1895 յունիս 4-6-ին (Մայիս 25-25):

Ըրկու խնդիրներ այս տարուայ համաժողովը առանձնապէս հետաքրքիր էին դարձնում որոնց յիշատակութեամբ և կրակականակնք այս անգամ — Արգէն նախորդ յօդուածի մէջ յիշուեցաւ, որ համաժողովի գործն անդամները սկզբից և եթ 2 տարբեր սերունդ էին ներկայացնում: Նախկին «բըրիտանեայ» — համայնական կուսակցութեան հետևող պահպանողական ձերերը և մի նոր հոսանք յառաջ բերել ձգտող յառաջադէմ երիտասարդները: Այսին տարուայ ընթացքում մի քանի հանգամանքների շնորհիւ այդ տարբերութիւնը աւելի զգալի էր դարձել և շատերը երկիւզ էին կրում, որ նա պատճառ կլինի պատակաւ ձգելու համաժողովի մէջ, երիտասարդների պարազլուխներից մէկը՝ պատար նաւուաման, Hilfe (օգնութիւն) անունով մի թերթ էր սկսել հրատարակել, որի գէմ շատ յարձակումներ եղան, իրրե սոցիալ-գէմնկրատիքական դաշափարներ

* Տես Արխատիկս Լաստիվերոցի Պատմութիւն Գլուխ 76 և 79: Մագիստրոսի Թղթերը:
* Տես Արարատ Օգոստոս 1895, նր. 274-282:

պաշտպանող և տարածող ներկայացնելով նորա համակրողներին: Նոյն իսկ համաժողովի ամենանշանաւոր ներկայացուցիչներից մէկը՝ ուսուցչապետ Նաթուղիուս, սորա վերջերս բռնած ուղղութեան մէջ կասկածելի ազատամտական հակումներ նկատելով հրապարակաւ հրատարակեցաւ անդամութիւնից և այս դեպքը բաւական մեծ տարւորութիւն գործեց: Սակայն այս տարուայ համաժողովն ևս շատ խաղաղ և յաջող ընթացք է ունեցել և բոլոր ներկայ եղողներին այն համոզման բերել, որ նա հաստատուն հիմունքների վերայ է գրուած և անկեղծ: Խոհեմ ու անձուէր տղամարդոց ձեռքով է կառավարուում: Արդարեւ բաւական է միայն մի անգամ ոտքից գլուխ գիտել այդ թիկնաւետ և անաղուէն սրտաբաց եկեղեցականին: Ընչպիսին է Նաւուման: սրի խօսքերը այնպիսի բնական անպաճօճ առատութեամբ թափուում են՝ կարծես ուղղակի սրտի խօսքից բղխած մի հեղեղ լինին: որպէս զի ամեն որ համոզուի թէ այդ մարդը կեղծել և յետին մտքեր ունենալ չէ կարող:

Արկրորդ աւելի հետաքրքիր խնդիրն այն էր: Թէ ինչպիսի յաջողութիւն պէտք է ունենայ Պերմանիայում առաջին անգամ մի կին այսպիսի ահազին ժողովի առաջ ամբիոնի վերայ բարձրանալով: Գործադիր մասնախումբը մի տարի առաջ: Ընչպէս յիշուել է, կանանց մասնակցութիւնը համաժողովի մէջ սկսուեցրով ընդունելուց յետոյ՝ որոշել էր այս տարուայ գլխաւոր բանախօսութիւններից մէկի համար մի կին հրաւիրել: Այդ ծանր պարտականութիւնը յանձն էր առել կատարել Տիկին Գնաուկ, Շառօկիերի օգնութեամբ ընտրել իւր խօսքի նիւթ՝ «Անոջ համայնական փրձակը»: Ահա նորա բանախօսութեան համառօտ բովանդակութիւնը:— Աերջին ժամանակներս կնոջ փրձակի մէջ մի մեծ փոփոխութիւն է յառաջ եկել. գործաւոր զասակարգի կանայք աւելի յաճախ են ամուսնանում և ստիպուած են միեւնոյն ժամանակ իրենց մարդկանց հետ աշխատել գործարանների մէջ. կրթուած կինը ամուսնական կեանքից յաճախ զրկուած լինելով, աշխատանքից ևս ազատ է: Ասանց շարժման նպատակն է վերականգնել այսկերպ խախտուած հաւասարակշռութիւնը:— Քարծր զասակարգերում կնոջ համար ամբողջ աշխարհը ընտանիքն է. հրապարակային կեանքի մէջ նա գրեթէ մասնակցութիւն չունի: Քանի մեքենաները չկային, նորա առաջ գործունէութեան ընդարձակ ասպարէզ էր բաց՝ սեփական տան մէջ, ամբողջ անտեսութիւնը նորա վերայ էր, նորա սիրան ու ուղեղը դրաղմունքի սուտ պաշար ունեին և նորա աշխատանքը բոտ արժանւոյն գնահատուում էր. իսկ աշխատութիւնը հոգեկան բա-

ւականութիւն և ընտանեկան երջանկութիւն է բերում իւր հետ: Այժմ՝ հանդամանքները բոլորովին փոխուել են. այսօր միայն Պերմանիայում և միլիոն շամուսնացած կանայք կան: որոնց մի մասը հոգեով սրտով աշխատանք է որոնում: Աւ ոչ միայն նորա, այլ և ամուսնացած կանայք աշխատանքի պահտութիւն են զգում: Եթէ նորա շքաւոր են՝ կալիքը նոցա ճնշում է, իսկ եթէ ասպրուտաի միջոցներ ունին՝ անգործութեան և անպէտքութեան ծանրը զրացումը: Աեանքը իւր արժէքը կորցնում է, եթէ նա միայն զուարճութեան համար է ծառայում: Ընչպէս մարդն առանց կոչումի լինել չէ կարող այնպէս և կինը պէտք է պարտականութիւնների և աշխատութեան մի որոշ շրջան ունենայ: որ նորա կեանքին բովանդակութիւն և նպատակ տալ կարող լինի: Այր և կին տարբեր են հարկաւ: տարբեր կոչումներ պէտք է ունենան: և այդ տարբերութիւնը վերցնելու ջանքը միշտ անպատակ պէտք է համարուի: Անոջ առաջին կոչումը մայրութիւնն է՝ առն և երեխայ պահելը նորա գործունէութեան բուն ասպարէզը: Աւստի և կնոջ պէտք է վերապահել այն բոլոր աշխատութիւնն ու կոչումները, որոնք այս մասին են պատկանում: այդպէս օրինակ աղջկանց դաստիարակութիւնը թէ ստորին և թէ բարձր շրջաններում, մինչև իսկ բժշկուհիներ կրթելու գործը: Գաստիարակութեան հետ մեկ տեղ ինկատի առնելու են աղքատներին և հիւանդներին ինամոյ բարեգործական ձեռնարկութիւնները, իրենց զանազան ընդարձակ ծիւղերով: իրրե կանանց ընդունակութիւններին համապատասխան և նոցա աշխատանքի առատ նիւթ մատակարարող մի ասպարէզ:

Աղջկանց արգի դաստիարակութիւնը այնպէս է ուղղուած, որ այս ամենի համար ոչ մի կերպ չէ նախապատրաստում: Քետք է պահանջել, որ զբոլորոցական վերջին դասընթացի միջոցին անային տրեսեսութեան դասեր տրուին. պէտք է միջոց տալ շատերին անտեսութեան և ծաղկոցների համար վարժուհի պատրաստող մասնագիտական դպրոցներ յաճախելու: Համալսարանի դռները պէտք է նոյնպէս բանալ կանանց առաջ: Արպէս զի անային ըզբաղմունքների մէջ ծաշակ և հոգի մանէ՝ հարկաւոր է որ կինը հիմնաւոր բազմակողմանի կրթութիւն ունենայ: Հէնց ամենից կրթուած կինը ամենալաւ տանտիկինը կլինի: Հիմնաւոր կրթութիւնը բոտացած կինը միայն կարող է իւր կրթուած ամուսնու իսկական ընկերուհին լինել, իւր հասակաւոր որդւոց առաջ հեղինակութիւն ունենալ, տանտիկնոջ բոլոր պարտականութիւնները հասկանալ, Այսպիսով նա աւելի զօրեղ պաշտպան կլինի ամուսնա-

կան սրբութեան, ամենայն իրաւամբ այս տեղ ևս
հաւատար պարտականութիւններ պահանջելով տղա-
մարդուց:

Խնդիրը փոխուում է, երբ խօսքը գալիս է
բանուոր դասակարգին: Այստեղ ընդհակառակն կը-
նող պէտք է աշատել չափազանց ծանր աշխատան-
քից: Այնտեղ ուր կինը ոտք է գնում գործարանի
մէջ՝ ընտանեկան կեանքի մասին խօսք անգամ լի-
նել չէ կարող: Իսկ առարկել, թէ անհրաժեշտ չէ
որ կինը գործարաններում աշխատէ, կնշանակէ դա-
շափար չունենալ բանուոր դասակարգին ճշտող կա-
րիքի մասին: Տներում աղակին լինելը խիստ հրա-
պուրիչ բան չէ կանանց հիմար, սակայն եթէ լինէր
իսկ՝ դուրսը կմնային այնու ամենայնիւ 600,000
կանայք: որոնց համար չի կարելի գործ գտնել տը-
ներում: Կորա ստիպում են գործարաններում աշ-
խատել, և այն օրէնքի սահմանած չափից աւելի: Հե-
տեանքը անկումն է թէ առողջապահական և թէ
բարոյական տեսակետից: Թէ գործարանական կեան-
քը ինչքան նպաստում է անբարոյականութեան զար-
գանալուն և թէ ինչպիսի հրեշտար ընթացք են
ցոյց տալիս այս նկատմամբ գործարանատէրերից ու-
մանք՝ յայտնի է ամենքին: Այս զեղծումների առա-
ջին աննկու համար պէտք է վերահսկողներ պետու-
թեան կողմից քննիչներ նշանակել: աշխատել որ օրա-
կան 10 ժամ պարապմունքը Քերմանիայում ևս օրէնք
դառնայ: ինչպէս Անգլիայում է, և զանցառութիւն և
աւելի խտիւ պատժուի: պէտք է համայնական ոգի
մտցնել բանուոր կանանց մէջ և սովորեցնել նոցա
ընկերական ուժով իրենց շահերին պաշտպան հան-
գիստնալու:

Բարձր դասակարգի կինը չափից աւելի պա-
կաս, ցածր դասակարգինը չափից աւելի շատ է ծան-
րաբեռնուած աշխատանքով: ուստի առաջինը
պէտք է երկրորդի բեռից մի մաս իւր վրայ առնէ:
Այդ նպատակին հասնելու համար պէտք է այժմեան
կրթութեան եղանակը բոլորովին կերպարանափոխել
և գեղարուեստական ուսմանց փոխարէն տալ կնոջ
այնպիսի ուսումն, որ նորան պէտքական է գործնում
համայնական կեանքի համար: Համայնական խնդրի
խաղաղ լուծմանը նպաստել կարող է միայն նա, որ
պատրաստ է կարիքը պահանջած ժամանակ իւր ան-
ձը և իւր սեփական բաղբը զոհ բերելու:—Հե-
տեում են բուռն, անկեղծ ծափահարութիւններ:

Այս տարուայ համաժողովը հետաքրքիր նիւթ
շատ է ընծայել: ինչպէս օր. ուսուցչապետ Փուրրերի
բանախօսութիւնը՝ բնական գիտութիւնները
և և համայնական շարժումը ներկայումս
վերակարգով, որի մասին լրագրութեան մէջ բաւական
նշափ փնտրանքութիւններ եղան: րայց նա իւր

զխաւոր յաջողութիւնը պարտական է Տիկին Գնա-
ուկի ճառին: Ահա թէ ի՞նչպէս է նկարագրում վեր-
ջինիս թողած տպագրութիւնը ականատեսներից
մէկը, որ առհասարակ շատ զոհ է մնացել համա-
ժողովից:—«Վեր բոլորի սիրաբ զոյի մէջ էր, երբ
սեւեր հագած զժողոյն տիկինը, սե զխանցով՝ ամ-
բիտնի վերայ բարձրացաւ: «Մի կնոջ բերանից ե-
լած առաջին խօսքն այստեղում շնորհակալութեան
խօսք պէտք է լինի»—արդէն այդ սկսուածքը սրտա-
շահ էր, այլևս ոչ մի աւելորդ վրուն բառ՝ նա
խկոյն բուն նիւթին անցաւ... Ժողովականները
երկար ժամանակ լուծուին էին պահում շնայելով
պատուական խօսքեր շատ արտասանուեցան: րայց
տակաւ առ տակաւ շատանում էին հաւանութեան բա-
ցականութիւնների, և վերջերում մի քանի տեղ
որոտագին ձայների բնաւորութիւն ընդունեցին: Ճա-
նախօսը ընդհատում էր և կարծես թէթեւացած ու
սիրտ առած կրկին շարունակում, մինչև որ հաւանու-
թեան ձայների ահագին դողդոցով կնքեց իւր խօսքը:
Մեծ ու խորհրդաւոր մի ժամ էր այդ: Կարգ ճշմարտու-
թեան յաղթութիւնն էր այդ: Քիչ էր մնում որ
մարդու աչքեր արտասուքից թրջուէին: Յաջողու-
թիւնը կատարեալ էր: մի կին յանուն Քրիստոսի
հրապարակաւ պաշտպանել էր իւր նեղեալ քոյրերի
գատը: Զարգացած ձեւանալու տենչը կամ սնտար-
ծութիւնը չէին այդ կնոջ ստիպել ամբիտնի վերայ
բարձրանալու: բազմութեան առաջ ելնելու: այլ խ-
րին ցաւակցութիւնը: նա իւր անձը բոլորովին յեռ
էր քաշում և իրողութիւնն էր միայն առաջ գնում:
Այդ է նորա յաջողութեան գաղտնիքը: Եւ զեռ
աստուներ կան, որ մենք գաղափարներից զուրկ մի
ժամանակի մէջ ենք դանուում: ...»

Կ. Վ.



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲՐՈՆԻԿՈՆ՝

ԿԱՐԱՆԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Խաղական կառավարութիւնը սեպտեմ: 20-ին
նոր տօմարով, տօնեց Հոռոմի առման 25—ամեակը:
Այդ յօրեկեանը մեծ հոգսեր էր պատճառում Աա-
տիկանում: որովհետեւ կարծում էին թէ ազգային
այդ տօմարութիւնը պէտք է ուղղուած լինի ե-
կեղեցու ընդդէմ:

Հոռոմի առումով վերջացաւ պատերի դարեւոր աշ-
խարհային իշխանութիւնը, որի հետ ոչ պատկերը և
ոչ կաթողիկ աշխարհը այս 25 տարուայ ընթաց-
քում չէ կամենում հաշտուել: նախորդ Օկոս IX-ի
ընթացքը խաղական կառավարութեան դէմ